ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-758-11.01.2024-ԱՌՀ-011/0) ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲԱՆԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՆԱՐԵԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ	«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-758-11.01.2024-ԱՌՀ-011/0) օրենքի նախագիծ	Առաջարկում եմ նախագծի 1-ին հոդվածով գործող օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Օրենքի 47.1-ին հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև 9-րդ մասի 2-րդ կետի պահանջները մինչեւ 2025 թվականի հունվարի 1-ը չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների վրա:» ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: 2023 թվականի մարտի 23-ին ընդունվել եւ հրապարակվել է «ՀՀ կառավարության N 867 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության թիվ 359-Ն որոշումը, որով սահմանվել են բժշկական արտադրատեսակների արտադրության, ինչպես նաեւ սպասարկման լիցենզավորման կարգերը (համապատասխանաբար՝ Հավելված 17-րդ եւ 19-րդ): Ստացվում է, որ նախագծում արձանագրված՝ Օրենքի 47.1.-ին հոդվածի 2-րդ մասի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտն ուժի մեջ է և գործում է արդեն: Ելնելով դրանից, եթե Հայաստանի Հանրապետությունում բժշկական	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխու-թյունը:	Ընդունվել է:

		արտադրատեսակների արտադրությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներին անհրաժեշտ է լիցենզավորվելու համար ժամանակ տալ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը, ապա հարկ է արձանագրել, որ լիցենզավորման գործընթացը նրանց վրա չի տարածվում մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:		
ՆԱՐԵԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ	«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-758-11.01.2024-ԱՌՀ-011/0) օրենքի նախագիծ	Առաջարկում եմ նախագծի 1-ին հոդվածով գործող օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5. Օրենքի 47.4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները մինչեւ 2025 թվականի հունվարի 1-ը չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների սպասարկմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների վրա:» ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: 2023 թվականի մարտի 23-ին ընդունվել եւ հրապարակվել է «ՀՀ կառավարության N 867 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության թիվ 359-Ն որոշումը, որով սահմանվել են բժշկական արտադրատեսակների արտադրության, ինչպես նաեւ սպասարկման լիցենզավորման կարգերը (համապատասխանաբար՝ Հավելված 17-րդ եւ 19-րդ): Ստացվում է, որ նախագծում արձանագրված՝ Օրենքի 47.4-րդ հոդվածի 1-ին մասի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտն ուժի մեջ է և գործում է արդեն: Ելնելով դրանից, եթե	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխու-թյունը:	Ընդունվել է:

		Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների սպասարկմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներին անհրաժեշտ է լիցենզավորվելու համար ժամանակ տալ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը, ապա հարկ է արձանագրել, որ լիցենզավորման գործընթացը նրանց վրա չի տարածվում մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:		